

պատահելով՝ բաւական ժամանակէ հետէ խոթացեալ էր եւ ի ձեռն բժշկաց խաղառ բժշկուիլ չէր յաջողած, անցեալ տարւոյ վերջերում հրաման րնգունած էր եւ կըշրջագայէր օգտաւոր խութեամբ իւր տկարութիւնը թեթեւցնելոյ համար: — յՅն Յունվար ամսոյս վախճանեցաւ ի Զօհրապլու գեղջ Գառնւոյ եւ մարմինը ի գերեզման ամփոփեցաւ նոյն գիւղում:

Ի ՀՈՒՇԻ ՔԱՂԱՔԻ:

Քանի ժամանակ բնակուելով Բաքուոյ քաղաքում՝ մի օր լսեցի որ Համախուց գաղթուած մոլորեալք բունաւորուած են նաև Բաքուոյ մէջ, ունին այստեղ ժողովարան և քարոզիչ, եւ շատ սիրով ցանկանում էի տեսնել ինչպէս նոցա ժողովարանը, այնպէս էլ լսել նոցա քարոզչի խրատները: Աւստի մի կիւրակէ օրը զկնի կէս աւուր զնացի ժողովարան (Սովորութիւն է նոցա կիւրակէ օրերը առաւօտեան ժամը 10-ին և զկնի կէս աւուր ժամը 3-ին ժողովուել ժողովարան): Մտի ժողովարանը թէ չէ, տեսնելով ինձ օտարական ոմն, իսկոյն սիրով ընդունեցին զիս՝ առաջարկելով աթոռ, իսկ ես նկատեցի այս տեղ, ո՞վ Աստուած, զի՜ նչ:

Ժողովարանը՝ որ տեղ մեր ազգէ մոլորուած բողոքական կոչուողները կատարում էին իւրեանց աստուածաշարժութեան խորհուրդները՝ էր մի հասարակ սենեակ, Սենեակի մի անկիւնում դրած կային մի քանի աթոռներ, որոց վերայ նստած էին մոլորեցող պատուաւորները, իսկ միւս անկիւնում էր մի սեղան, որոց վերայ դրսած կային մի քանի հատ զրբեր և այդ սեղանի մօտ մի աթոռ, որի վերայ նստած էր մի չափահաս մարդ, որ կատարում էր քարոզչի պաշտօն: Պատուհաններն մեկի մէջ դրսած կային նոյնպէս մի քանի հատ զրբեր, իսկ միւսումն բազմաթիւ անկողիներ, իմացայ՝ որ զիշերները այդ անկողինաց մէջ ննջում է տանտէրը իւր դերդաստանաւ: Սենեակը լի էր զանա-

զան մարդիկներով, որք ծալապատակ նստած հողի վերայ խօսում էին զանազան նորանոր լուրերից, այն է՝ լրագրական տեղեկութիւններից, դատողութիւններից և վաճառականական շահախնդրութիւններից: Գեռ վաղ էր՝ փոքր ինչ սպասեցի և ահա մի մի սկսեցին ժողովուիլ: Սոքա ինչպէս երևում էին, էին զանազան սեռի արհեստականք և մի քանի հատ մանր մունր ծախս անող շահասէր վաճառականք: Գոցա մէջ չկայ անգամ մի հատուցական կոչուած ոմն: Քարոզիչը այս միջոցում ձեռքով նշան արաւ մոլորեալք իսկոյն միաբերան սկսեցին երգել աշխարհաբառ լիզուաւ այն երգը, որ ցոյց տուաւ նոցա քարոզիչը, երգից յետոյ քարոզիչը բարձրացաւ աթոռից և երեսը դէպ ի ժողովուրդը դարձրած՝ բարձրացրաւ իւր ձեռքերը և աչքերը դէպ ի երկինք և փոքր ինչ լուծիւնից յետոյ՝ սկսեց աղօթել մի ինքնահնար աղօթք: Այս միջոցում ժողովուրդք չոքեցին և աչքերը դէպ ի երկիր խոնարհացրած լսում էին քարոզչի աղօթքը: Աղօթքից յետոյ քարոզիչը նստեց աթոռի վերայ, ժողովուրդքը կրկին ծալապատակ նստեցին հողի վերայ: Քարոզիչը սկսեց քարոզել Աւետարանի այս խօսքի վերայ. — «Գտանէ սա նախ զեղբայր իւր զՍ/մէօն և ասէ ցնա. գտաք զՄեսիայ որ թարգմանի Քրիստոս: Քարոզիչը այս բնաբանով աշխատում էր հաստատել, որ միայն մոլորեալք են գտել Մեսիային, ուստի և աշխատում էր ցոյց տալ, որ հարկաւոր է նոր միաբանութիւններ կազմել, ինչպէս անում էին երբեմն և այժմ իսկ անում են Եկեղեցւոյ մի քանի ինքնակոչ ախոյաններ: Քարոզի միջոցում երբեմն երբեմն բողոքականք զուհանիւր շարժելով հառաչում էին, վայ մեզ գոչելով, ի նշան խորին զգացման, որով և աւելի ոգևորվում էր քարոզիչը: Քարոզը վերջացաւ նոյնպէս աղօթքով: Քարոզչի աղօթքից յետոյ հանդիսականներից ոմանք սկսեցին մի մի աղօթել բարձր ձայնիւ՝ լստ իւրեանց քմաց և ցանկութեան այսպէս աղօթողների թիւը հասաւ մինչև հինգի կամ վեցի: Աղօթները վերջացնելից յետոյ կրկին երգեցին և արձակուեցան: Այսպէս մի կողմից նկատելով առաքելահիմն եկեղեցին՝ տպէտ

և անարգ պարուններին՝ փոխուած մի ննջարանի սուրբ սեղանը՝ մի գրատախտակի՝ հոգեկց շարականը՝ մի անձոռնի երգի օծուած քահանայն՝ մի վաճառաշահ երկտասարկի պաշտօնեկց ուետը՝ մի շատախօս վաճառականաց շապիկ և շուրջաքը՝ մի անպիտան անկողնեաց ևլն ևլն միւս կողմից նկատելով՝ աւետարանի այլ ընդ այլոյ քարոզութիւնը այն է՝ միամիտ հասարակութեան մէջ փոխանակ սիրոյ՝ երկպառակութիւն սերմանելը, փոխանակ հին քրիստոնէական և լուսաւորչական միաբանութիւն բարգաւաճացնելոյ՝ նորա հիմն ի վեր տապալելը, Հայկական պարծանք անունն չէ՛ր բառով փոխարինելը, ևլն ևլն այսպէս այլ ևս չկարողանալով համբերել, մօտեցայ դէպ ի քարոզիչն ասելով. — «Սարելի՞ է պարուն՝ ինձ ևս երբ և իցէ քարոզ խօսել այս ժողովարանում, և քարոզիչն և միւս մոլորեալք՝ որք իմ շուրջս պատած էին, համաձայնեցան լսել իմ քարոզութեան չորեքշաբաթի օրն:

Չորեքշաբաթի օրն կրկին գնացի ժողովարան, այդ օրդ բոլոր մոլորեալք ժողովուեցան լսել իմ քարոզութեան, նոքա առաջարկեցին ինձ նստել քարոզչի տեղը, և երբ նստեցի՝ իւրեանք միաբերան երգեցին մի երգ՝ ըստ իւրեանց սովորութեան: Երգից յետոյ սկսեցի իմ քարոզս այս բնաբանով. — «Եթէ ուտէք այդպիսի զիւնք ինչպէս աստուածներ, կճանաչէք բարին և չարը, և իմ քարոզութեանս մէջ ցոյց ետու մոլորեցող իւրեանց աստուածանալոյ սըխալ և մոլոր ցանկութիւնը, որ նոքա փոխանակ արգելուած ծառի՝ այն է՝ երկպառակութեան պատուը ուտելով աստուածանալոյ և լուսաւորուելոյ: Հայաստանեայց Եկեղեցւոյ կրօնի և ազգութեան դրականից զրկուելոյ խաւարի և տգէտ մոլորութեան մէջ խարխափիլն ճոյց ետու որ՝ ոչ երբէք և ոչ մի ժամանակ չէ տեսնուած հպարտութիւնից, ինքնահաւանութիւնից, երկպառակութիւնից ծնանի լուսաւորութիւն, երջանկութիւն և շինութիւն, այլ միշտ յառաջ է եկած խաւար թշուառութիւն և կործանումն: Անբընպէս ցոյց ետու մեր Եկեղեցւոյ օրմութիւնը, մեր քրիստոնէական պարտքը, որ է՝ «էք և յիւսնէք» որով և աւարտեցաւ իմ քարոզս:

Այս իմ քարոզութիւնս լաւ ներգործութիւն ունեցաւ մոլորեցող վերայ և ինչպէս լսեցի այդ օրից մի կին այլ ևս չէ գնում ժողովարան, այլ միշտ Եկեղեցի գնալով լսում է Հայաստանեայց սուրբ Եկեղեցւոյ ժամերգութեան ձայնը: Սորանից յետոյ մի քանի անգամ մոլորեալք իւրեանց քարոզչի հետ միասին եկան իմ սենեակս և իմ երկար խօսակցութիւններից և յանդիմանութիւններից յետոյ միանգամ նոցա քարոզիչն ասաց. — «Մի՞թէ մենք մարդ չե՞նք, մի՞թէ մենք չե՞նք զգում մեր սխալմունքն որ մենք փոխելով մեր կրօնը՝ շուտ կ'ոմ յետոյ պիտի և փոխեմք մեր ազգութիւնը, որ այս լինում է ազգութեան թափառում, իսկ Քրիստոս ինքն իւր ազգի փրկութեան համար զոհուեցաւ: Բայց ի՞նչ արած, մենք պահանջում ենք ունենալ քարոզիչ քահանայք, առաքինի և խոհեմ հովիւներ, որք շարունակ հովուեն իւրեանց հօտը ոչ բանիւ և եթէ այլ և գործով, Հասարակութիւնը պահանջում է ունենալ այսպիսի քահանայք և երբ Հայաստանեայց Եկեղեցւոյ մէջ չէ գտնուում զրեթէ իւր ցանկացած քահանայքը, ուստի զրնում է և դիմում դէպի այն տեղ՝ որ տեղ գտանւում են քարոզիչք, որք լիք լաւ և լիք վատ՝ զովացնում են հասարակաց ծախաւը և հարկէ եթէ մեր քաղաքներում գտնուէին գոնիա մի մի հատ քարոզիչ քահանայք, հաւատացնում եմ ձեզ, որ ոչ որ չէր թողել իւր հաւատը իւր Եկեղեցին, որոյ մէջ ինքն ծնուած, մկրտուած և սնուած է՝ և մտնել օտարների փառախոր:»

Պատասխանեցի ես. — Ճշմարիտ է ասածներդ, որ մենք չունինք արժանաւոր քահանայք, բայց մենք պարտաւոր ենք աշխատել ունենալ, և ոչ կրօնափոխ լինելով կործանել ազգութիւնը (Տես Առհան Շահունեանց ստորագրութեամբ յօդուածը Արարատի—1876 թ.—Մարտ ամսամերթի մէջ տպագրուած «Մի քանի նկատողութիւնք մեր հոգևորականութեան վերայ»): Այդ յօդուածի մէջ պարզ նկարագրած է այն սխալ և մոլոր դատողութիւնները՝ որոնցմով բարբառեցում են մոլորեալք: Այսպէս երկար խօսակցութիւններից յետոյ կնքեցի իմ խօսքս. — «Այսօր ահա

Ժամ է՝ անձնագրահաւթեան, ով ունի քանքար քարոզութեան՝ թող յառաջ գայ և իւրեան անձն իրրե Իսահակ, կամաւ զի Ազգի և Եկեղեցոյ պայծառութեան համար, ով ունի նիւթականի զօրութիւն, թող օքնէ մեր Աւհափառ Հօր՝ Նորա զանազան ազգօգուտ կարօտութիւնների մէջ, և ին, և ին և ոչ ունայն բարձրամանքով մորթացնել միամիտների սիրտը, ստացնել նոցա ջիւղմեռանդութիւնը, անօգուտ քարոզել նոցա աստուածապաշտութիւնը և ին, և ին, և ին ձեզ դպրաց և փարիսեցւոց կեղծաւորաց, զի փակէք զարքայութիւն երկնից առաջի մարդկան. դուք ոչ մտանէք, և որոց մտանենն՝ Հայք թող մտանել, և

Վ. Շ. ԱՐԱՄ.

Այս առթիւ մեր խօսելիքը հետագայ ամսաթերթից կ'իջողուի:

Աստրախանու մէջ երբեմն Հայոց ունեցած եւ ի ներկայս խափանեալ մնացած տպարանի վերայ հետագայ տեղեկութիւնը գրուած եւ խնդրուած է հրատարակել:

ԽՈՓԱՆԵԱԼ ՏՊԱՐԱՆ ՀԱՅՈՑ

ԱՍՏՐԱԽԱՆ ԲԱՂԱՔԻ.

Բարձրագոյն հրամանաւ յամին 1795 յաւտրա թեմակալութեան երջանկայիշատակ Առաջնորդի Հայոց համայն Ռուսաստանեայց Տեսուն Յովսէփայ Արքեպիսկոպոսի Արդութեանց՝ բազեալ է Վատրախան Տպարան, ուր տպեալ են ըստ մեծի մասին գրեանք Հայոց և թարգմանութիւնք ճառից, քարոզից, եկեղեցական արարողութեանց և աղօթից ի Ռուս լեզու. Յամին 1797, Աստրախանայ նահանգային կառավարութիւնն միջամխելով ի գործ բացեալ Տպարանի՝ պահանջեալ է զինչ ինչ տեղեկութիւնս ի Թեմական Իշխանութենէ, Գիր. Սրբազան

Արհն Յովսէփ տուեալ է զպատշաճաւոր պատասխանի նմին կառավարութեան. Նահանգային իշխանութիւնն յետ ընդունելոյ զգրութիւն Առաջնորդի, յայտարարութեամբ ի 10 Նոյեմբ. բերի նոյն ամի համար 32891 հասուցեալ է զայնմանէ ի տեղեկութիւն Կառավարիչ Սենաթին, խնդրելով զԲարձրագոյն լուծումն ենթադրելոյ զայն Ազգային Տպարան՝ տեսչութեան Ս. Սինօդին Ռուսաց. ընդ նմին հարցեալ է թէ որո՞յ վերահասութեան և գրաքննութեան ունին պատկանիլ այսուհետեւ տպեալ գրեանք ի նմին տպարանի և կամ ի վերայ ռուսիսի հիման մարթէ թողյալով զգրութիւն Տպարանի Հայոց, Առ այս յայտարարութիւն և հարցումն նահանգային իշխանութեան Աստրախանայ՝ Կառավարիչ Սենաթն հրամանագրութեամբ յ2 Ապրիլի 1798 ամի համար 6168, տուեալ է նմին զիտեալ, թէ Նոյին Կայսերական Մեծութիւնն հրովարտակաւ ի 25 Մարտի նոյն ամի բարեհաճեալ է հրամայել, զտպարանն Հայոց Աստրախանայ թողուլ ընդ տեսչութեամբ և կառավարութեամբ Հոգեւոր Իշխանութեան Հայոց, զգրաքննութեան պաշտօն տպեալ գրեանք Հայոց լեզուի յանձնել Արքեպիսկոպոսին Հայոց Յովսէփայ, և վասն քննելոյ զթարգմանութիւնս և զտպեալ գրեանս Ռուսաց լեզուի՝ նշանակել զոմն օգնական Արհնոյն. բայց ոչ յետ բազմաց ինչ աւուրց՝ նոյն Կառավարիչ Սենաթն կրկին հրամանագրութեամբ ի 27 Մայիսի նոյն ամի համար 9362, յանուն Յովսէփայ Արքեպիսկոպոսի, զպաշտօն գրաքննութեան Ռուսերէն և Հայերէն տպեալ գրեանց՝ եղեալ է ի վերայ համութեամբ Հայոց և Ռուսաց լեզուի բարեհաճաւեալ Գրիգոր վարդապետի, որ գտեալ է պաշտօնիւ առ Գիր. Սրբազան Առաջնորդին և ընդ նմին Սենաթն տուեալ է զիտեալ զայնմանէ պարօն նահանգապետին և նահանգային կառավարութեան Աստրախանայ. Ըստ այսոցիկ տեղեկութեանց՝ Աստրախանայ Հայոց տպարանն բացեալ է ի վերայ հիման Բարձրագոյն թողյալութեան, գրեալ է ընդ տեսչութեամբ Հոգեւոր Իշխանութեան, և տեալ է մինչև ցաւուրս Թեմակալութեան Յովհաննէս Արքեպիսկոպոսի Առաջնորդի Հայոց